«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *«Վեց տարեկանների պատրաստվածությունը դպրոցին»*

Առարկան՝ *«Դասվար»*

Հետազոտող ուսուցիչ՝ *Էլիզավետա Օհանջանյան*

Ուսումնական հաստատություն՝ *«Մասիս քաղաքի Վահրամ Բաբայանի անվան N2 հիմնական դպրոց»ՊՈԱԿ*

Երևան 2022

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն ---------- էջ 3-5

Գլուխ 1._Երեխաների պատրաստվածությունը դպրոցին---------- էջ 5-8

Գլուխ 2.Դպրոցական կրթության հոգեբանական պատրաստվածություն ----- էջ 8-14

Եզրակացություն ---------- էջ 14-15

Օգտագործված գրականության ցանկ ---------- էջ 16

«Առանց ցանկություն սովորող աշակերտը

նման է թևեր չունեցող թռչունի»:

Սաադի

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերլուծելով 5-7 տարեկան երեխաների սոցիալական և հուզական հմտությունների ու կարողությունների զարգացման ոլորտում տնտեսապես զարգացած երկրների փորձը առանձնացնում ենք որոշակի կարողությունների և հմտությունների ցանկ, որոնք արտացոլում են երեխայի կյանքի տարբեր ասպեկտները՝ կոմունիկացիան, էմոցիոնալ ինտելեկտը, ագրեսիան կառավարելը, սթրեսը հաղթահարելը, կրթական հաստատությանը հարմարվելը: Նշված հմտություններից շատերը հնարավոր չէ ձևավորել ուղակիորեն: Սոցիալական կոմպետենտությունների կառուցվածքը տրվում է այն բանի համար, որպեսզի մեծահասակ դիտորդը կոնկրետ երեխայի վարքը կարողանա համեմատել սոցիալապես կոմպետենտ նախադպրոցականի վարքի էտալոնի հետ: Վեց տարեկանները գնում են դպրոց, նրանք մանկապարտեզներում կամ քոլեջներում մասնավորապես պատրստվել են դպրոցին: Սակայն պետք է հասկանալ, որ «դպրոց գնալ» և «սովորել» հասկացությունները շատ են տարբերվում միմյանցից: Երեխան կարող է ցանկանալ դպրոց գնալ, որովհետև մանկապարտեզում իր խմբի բոլոր երեխաները գնալու են դպրոց կամ այն պատճարով, որ դպրոց գնալիս կստանա գեղեցիկ գունավոր գրչատուփ և այլ իր համար գրավիչ առարկաներ: Դպրոցում իրենց համար գրեթե ամեն ինչ նոր է և՛ ուսուցչուհին, և՛ դասարանը, և՛ համակարգված գիտելիքները: Առարկայի ուսումնասիրումը կզարգացնի երեխաների ուշադրությունն ու կամային որակները, նրանց ավելի կազմակերպված կդարձնի:

Հետազոտության նպատակը՝

երեխաներին հնարավորություն ընձեռել մտնել ներխմբային փոխգործակցության, ապրել համագործակցության, փոխօգնության իրավիճակ:

Հետազոտության խնդիրը՝

մշակել և իրականացնել 6-7 տարեկան երեխաների դպրոցական հոգեբանական պատրաստվածության ձևավորման ծրագիր:

Ուսուցման ընթացքում զարգանում է մտածողությունը, համադրելու, համեմատելու, եզրակացություններ անելու կարողությունները: Վեց տարեկանն այն տարիքն է, երբ երեխաներին ամեն ինչ հետաքրքիր է շրջապատում: Այս տարիքում են կուտակվում կյանքի և աշխարհի մասին հիմնական գիտելիքները: Շրջապատող աշխարհի մասին այս տեսակ հետաքրքրությունը և ակտիվ ուսումնասիրումը խոսում է վեց տարեկանների սովորելու և դպրոց հաճախելու պատրաստության մասին: Սակայն այս հետքրքրությունն ու նոր ի հայտ եկած որակները պետք է զարգացնել:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄ՝ *«Ո՞վ կարող է օգնել այս գործում»:*

Բնականաբար ծնողներն ու ուսուցիչը համագործակցելով: Գոյություն ունի որոշակի «դպրոցական հասունություն» հասկացություն: «Դպրոցին անպատրաստ» երեխաների դժվար է տրվում դպրոցական ծրագիրը, նրանք սովորաբար կազմում են թույլ աշակերտների խումբը: Սակայն եթե այս երեխաները ձգտում են կատարել դպրոցական բոլոր պահանջները, այս դեպքում կարող է տուժել երեխայի առողջությունը: Դպրոցին անպատրաստ լինելը կարող է պայմանավորված լինել մի շարք պատճառներով՝ ֆիզիկական, սոցիալական, ժառանգական, ծննդաբերության տրավմաներ, զարգացման խնդիրներ և այլն: Ֆիզիկական զարգացման խնդիրները կարող են իրենց ետևից բերել նաև հոգեբանական զարգացման խնդիրներ, միևնույն ժամանակ ֆիզիկապես լավ զարգացած երեխան կարող է ունենալ ցածր ինտելեկտ, ծնողների՝ նման հարցերը անտեսելու և չկարևորելու պատճարով:

ԳԼՈՒԽ 1. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻՆ

Ուսուցչի գլխավոր նպատակը աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելն է դպրոցի, սովորելու, այբբենարանի, գրքերի նկատմամբ: Գրաճանչության ցանկացած մեթոդով աշխատելիս առանձնացվում է նախաայբբենական շրջանը:

Այս շրջանի հիմնական խնդիրները բազմազան են, որոնք կարող ենք բաժանել 2 խմբի՝ կազմակերպչական և ուսումնական:

1. Ուսումնական խնդիրներ՝

ա) Կարդալու կարողության մակարդակը ,

բ) Գրելու կարողությունների մակարդակը,

գ) Հնչյունային վերլուծական կարողությունները,

դ) Բանավոր կապակցական խոսք ,

ե) Խոսքի շարահյուսական կառույցը:

Այս բոլորի պարզելը նպատակ ունի ուսումնական գործընթացում հաշվի առնելու և ըստ դրանց դասը կառուցելու, աշակերտների հետ տարվող ֆրոնտալ, անհատական աշխատանքները պլանավորելու և իրականացնելու համար:

2.Կազմակերպչական խնդիրներ՝ երեխային ծանոթացնել նրանց համար նոր ուսումնական գործունեության հետ:

ա) ոսուցչուհու ծանոթությունը աշակերտների հետ,

բ) ծանոթություն դպրոցական կյանքին ու կարգուկանոնին,

գ)ծանոթություն աշակերտների իրավունքներին և պարտականություններին,

դ) սովորեցնել ճիշտ նստել, ձեռք բարձրացնել, անհրաժեշտության դեպքում ձերք բարձրացնելիս և պատասխանելիս կանգնել,

ե) հստակ պատասխանել հարցերին,

զ) լսել ուսուցչի խոսքը,

է) սովորել լսել ընկերներին,

ը) սովորեցնել օգտվել գրքերից և գրենական պիտույքներից:

Վերոնշյալ ներկայացված էր այն կարևոր կետերը, որոնք առաջնահերթ են ուսուցիչ-աշակերտ շփման առաջին իսկ պահերից: Այժմ ուզում եմ նշել որոշակի կետեր, որոնք

պետք է կատարեն ծնողները նախադպրոցական փուլում երեխային օգնելու համար: Նախ նշեմ ամենակարևորը, ոչ մի դեպքում ծնողը իրավունք չունի ոչինչ կատարել երեխայի փոխարեն: Ամենաառաջին և կարևոր բանը, որ ծնողները պիտի զարգացնեն երեխայի մեջ, դա պատասխանատվությունն է սեփական գործողությունների և արարքների համար: Եթե երեխան ունի նման զգացում, ապա դա կարելի է համարել նրա ուսումնական հաջողությունների գրավականը: Երեխայի առաջ պետք չէ որևէ պայման դնել, դա երեխային սովորեցնում է սովորել ինչ որ բանի համար: Սովորելը միշտ պիտի մնա նրա կենսական պահանջմունքը: Պատժվելու վախից սովորելը բերում է նրան, որ երեխան սկսում է ատել ուսումն ու դպրոցը: Պետք է գովել երեխային, եթե նա դրան արժանացել է: Այժմ անդրադառնանք մի շատ կարևոր հարցի՝ ի՞նչ է խանգարում երեխային սովորել: Ծնողների մեծ մասին թվում է, թե երեխայի՝ դասերից հրաժարվելը ուղղակի պայմանավորված է ծուլությամբ: Բայց ոչ հազվադեպ նույն այդ ալարկոտ երեխան ժամերով ինչոր բան է պատրաստում իր խաղալիքներից: Պարզվում է, որ խնդիրը ծուլությունը չէ:

Թվե՛ք այդ խանգարող հանգամանքներից ամենահաճախ հանդիպողները:

1. Անհաջողության խուճապային վախը Այս դեպքում երեխայի վախն այնքան ուժեղ է, որ թույլ չի տալիս նրան կենտրոնանալ և հանձնարարությունը կատարել ու նրա վարքը դառնում է քաոտիկ: Որոշ երեխաներ վախից կարող են արգելակվել՝ մասամբ կամ լիարժեք անջատվելով շրջապատող իրավիճակից: Այդ պահին նրանք արտաքինից թվում են անտարբեր և գրեթե անվրդով: Իրականում երեխան խորապես «ցնցված» է դպրոցական անհաջողությունից և եթե ժամանակին այս խնդրին ուշադրություն չդարձնել, կարող են զարգանալ դպրոցական ֆոբիաներ և այսպես կոչված դպրոցական նևրոզ:

2. Օբյեկտիվ դժվարություններ Երբեմն նրանք այնքան շատ են երեխայի ուսումնառության ընթացքում, որ նա հրաժարվում է կատարել այդ առարկաների տնային առաջադրանքները: Օրինակ, եթե երեխան անընդհատ հրաժարվում է մաթեմատիկայի հանձնարարություններից, պետք չէ շտապել նրա վրա «ալարկոտի» պիտակ փակցնել: Հնարվոր է նրան դժվար է տրվում տրամաբանական մտածողությունը: Այս դեպքում, երբ

դժվարությունները մնում են անցյալում, երեխան դադարում է խուսափել տնային հանձնարարություններից։

3. Մեծահասակների ուշադրությունն իր վրա սևեռելու ցանկություն Երեխան այս կերպ դասերին չնստելու և ձգձգելու ձևով իր վրա է հրավիրում մեծահասկների ուշադրությունը։ Նման երեխաներին ծնողական քնքշանք և սեր է պակասում։ Նրանք իրենց մենակ են զգում և հասկանում են, որ դպրոցական անհաջողությունները ծնողների ուշադրությունն իր վրա սևեռելու գրեթե միակ ձևն է։ հաճախ երեխաներին պետք է ոչ այնքան իրական օգնություն, որքան ծնողական զգացմունքների բաց ու անկեղծ դրսևորումը։ Այդ պատճարով պետք չէ խնայել և կորած համարել այն ժամանակը, որ ծնողն անց է կացնում երեխայի կողքին նստած։

4. Երեսառածություն :Այս դեպքում պետք է հետևել պայմանագրային սկզբունքին։ Եթե երեխան ցանկանում է երեկոյան հյուրընկալել իր ընկերոջը, համաձայնվում եք, բայց միայն այն պայմանով, որ նախքան այդ կատարի տնային հանձնարարությունները։ Երբեմն երեխան վեց տրեկանում գալիս է դպրոց ընդունվելու, և ծնողը հպարտ հայտարարում է, թե իր երեխան հինգ տարեկանից գրելկարդալ գիտի։ Գուցե ծնողներին թվա, թե դա լավ է, սակայն դա միանշանակ սխալ է, քանի որ աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ այդպիսի «գիտակ» երեխաները, որ ժամանակից շուտ կիսատպռատ դպրոցական ծրագիրն են յուրացնում, դպրոցում սկսում են ձանձրանալ։ Բայց հմուտ, բանիմաց մանկավարժը այդ կիսատպռատը պետք է լրացնի շատ կարևոր գիտելիքներով։ Իսկ այդ խեղճ երեխան, ով հասցրել էր արդեն ձանձրանալ, հիմա էլ չի կարողանում ուշադրությունը կենտրոնացնել այնքան, որ զատի, թե ինքն ինչը գիտի, ինչը՝ ոչ, որպեսզի իր չիմացածը կարողանա յուրացնել։ Ստացվում է, որ երեխան աստիճանբար սկսում է հետ գնալ, քանի որ բաց է թողնում կարևոր ինֆորմացիան և իր ոչ գրաճանաչ ընկերներից աստիճանաբար սկսում է հետ ընկնել։ Իսկ ի՞նչ սովորեցնել։ Ի՞նչ է պահանջվում վեց տարեկան երեխայից, այսինքն ի՞նչ սովորել նախադպրոցական տարիքում։

Նշենք ամենակարևորները՝

1. պետք է ակտիվորեն զարգացնել երեխայի մանր մոտորիկան,

2. պետք է զարգացնել երեխայի ուշադրության կենտրոնացումը և հասցնել այն մաքսիմալի՝ 15-20 րոպե ,

3. զարգացնել երեխայի հիշողությունը,

4. զարգացնել կրեատիվությունն ու երևակայությունը,

5. զարգացնել տրամաբանությունը ,

6. զարգացնել իր միտքն ազատ, անկաշկանդ արտահայտելու ունակությունը,

7.սովորեցնել ինքնասպասարկման ամենատարրական էլեմենտները (հանվել, հագնվել, շորերը կոկիկ դնել, սեղանից օգտվել) ,

8. սովորեցնել անձնական հիգիենայի կանոններին հետևել (լվացվել, ատամները լվանալ, ինքնուրույն օգտվել զուգարանից և այլն),

9. Սովորեցնել իր իրերը՝ գրքեր, տետրեր, գրիչներ կոկիկ օգտագործել, պահել և այլն։

ԳԼՈՒԽ 2. Դպրոցական կրթության հոգեբանական պատրաստվածություն

Իսկ այժմ անդրադառնանք նախադպրոցական հոգեբանությանը։ Նախադպրոցական տարիքն ընդգրկում է 3-7 տարեկան հասակը։ Այն բաժանվում է 3 փուլի՝ վաղ միջին ավագ նախադպրոցական տարիք։ Նախադպրոցական տարիքում երեխան սկսում է պարտականություն ձեռք բերել։ 3-4 տարեկան հասակում երեխան ակտիվորեն ինքնահաստատվում է, նրա մոտ ձևավորվում է նախաձեռնողականություն, նպատակասլացություն և մեղքի զգացում։ Ձևավորվում է աշխարհայացքը, բարոյաէթիկական հասկացությունները, դրդապատճառները։ Ձևավորվում է ինքնագնահատականը, իր տեղը մեծահասակների հարաբերությունների համակարգում։ Ավագ նախադպրոցական տարիքում, երբ բարդանում է շփումը մեծահասակների հետ, երեխան ինքն է հաճախ որոշում իր հարաբերությունները ինչոր բանի նկատմամբ, գնահատում է իր արարքները և դժվարությամբ է ընտրություն կատարում դրդապատճառի միջև։

Նախադպրոցական տարիքում կտրուկ կերպով աճում են ֆիզիկական և հոգեկան զարգացման հնարավորությունները, առաջացնելով նոր պահանջմունքներ, հետաքրքրություններ։ Նախադպրոցական տարիքում փոփոխություն է լինում ակտիվության ոլորտում, եթե երկու տարեկան երեխաները հաճույքով կատարում են տարբեր շարժումներ՝ թռչկոտել, վազել և այլն, ապա նախադպրոցականները ավելի

հաճախ են իրենց ակտիվությունը ուղղում ցանկալի արդյունքների հասնելու համար։ Փոխվում է նախադպրոցականի հարաբերությունները հասակակիցների հետ։ Նրանք ցանկանում են խաղալ այլ երեխաների հետ, ավագ նախադպրոցականները ընդհանրապես չեն սիրում միայնակ խաղալ՝ ձգտում են ինչոր բան պատմել ընկերոջը, նրա հետ միասին կատարել հանձնարարությունները, նրանք անհանգստանում են են մեկը մյուսի համար, առանց ընկերների ձանձրանում են։ Նախադպրոցական զարգացման սոցիալական իրադրության առանձնահատկությունները դրսևորվում են գործունեության նրա համար բնորոշ տեսակներում, առաջին հերթին՝ դերային խաղում։ Մեծահասակների կյանքին հաղորդակից դառնալուն ձգտումը, զուգորդվելով անհրաժեշտ գիտելիքների ու կարողությունների բացակայության հետ, հանգեցնում է այն բանին, որ երեխան այդ կյանքի մասին տեղեկությունները յուրացնում է իր համար մատչելի խաղի միջոցով։ Նախադպրոցական հասակի երեխաների զարգացման համար հատկապես նպաստավոր պայմաններ են ստեղծվում նախադպրոցական հասարակական դաստիարակության համակարգում։ Մանկական նախադպրոցական հիմնարկներում երեխաներին որոշակի ծրագրով գիտելիքներ են տրվում, ձևավորվում են նրանց համատեղ գործունեության նախնական ձևերը, առաջանում է հասարակական կարծիք։ Ինչպես ցույց են տալիս հատուկ հետազոտությունների արդյունքները, մանկապարտեզներում դաստիարակված երեխաների հոգեկան զարգացման ընդհանուր մակարդակն ու դպրոցում սովորելու համար պատրաստականության աստիճանը միջին հաշվով ավելի բարձր են համեմատած այն երեխաների հետ, որոնք մանկապարտեզ չեն հաճախում։ Նախադպրոցական տարիքում գործունեության առաջատար տեսակը խաղն է։ Խաղն առաջատար է դառնում ոչ այն պատճառով, որ ժամանակակից երեխան, որպես կանոն, իր ժամանակի մեծ մասը անց է կացնում խաղալով և համեմատաբար քիչ է ներգրավվում մեծահասակների աշխատանքաբին գործունեության մեջ։ Խաղը երեխայի հոգեկանում որակական փոփոխություններ է առաջացնում։ Նրանում սաղմնավորվում են ուսումնական գործունեության հիմքերը, որը առաջատար է դառնում դպրոցական տարիներին։ Մեծերի հետ համատեղ կյանքով ապրելու երեխաների ձգտումը միայն համատեղ աշխատանք կատարելու հիման վրա բավարարվել չի կարող։ Այդ պահանջմունքները երեխաները սկսում են բավարարել խաղի ընթացքում, որտեղ նրանք վերարտադրում են ոչ միայն աշխատանքը, այլև հասարակական հարաբերությունները,

իրենց վրա են վերցնում մեծահասակների հատուկ դերեր։ Այսպիսով, հասարակության մեջ իրենց յուրահատուկ տեղը ունենալու հետևանքով երեխաները դերային խաղեր են խաղում, որոնք մեծահասակների կյանքին հաղորդակից լինելու յուրահատուկ ձևեր են։ Խաղի ընթացքում երեխայի առջև առաջին անգամ հառնում են մարդկանց միջև գոյություն ունեցող օբյեկտիվ հարաբերությունները։ Նա սկսում է հասկանալ, որ գործունեության պրոցեսին մասնակցելը մարդուց պահանջում է կատարել որոշ պարտավորություններ և նրան որոշ իրավունքներ է տալիս։ Օրինակ, երբ երեխան գնորդի դեր է խաղում, սկսում է հասկանալ, որ իրավունք ունի ուշադրությամբ զննել այն, ինչ մտադիր է գնել, նկատողություններ անել սպասարկման վերաբերյալ, բայց խանութից հեռանալիս պարտավոր է վճարել ընտրած ապրանքի համար։ Բովանդակային խաղում դերի կատարման էությունը հենց խաղի մյուս մասնակիցների նկատմաբ այդ դերի կողմից պահանջվող պարտավորությունների կատարումն ու իրավունքների իրականացումն է։ Որոշակի դերերի հետևողական կատարումը երեխաներին կարգապահ է դարձնում։ Համատեղ գործունեության ընթացքում նրանք սովորում են համաձայնեցնել իրենց գործոցությունները։ Երեխաների խմբի մյուս անդամների հետ ունեցած այդ իրական փոխհարաբերությունները ոչ միայն կոլեկտիվիստի գծեր են ձևավորում, այլև զարգացնում են երեխայի ինքնագիտակցությունը։ Հասակակիցների և նոր ստեղծվող կոլեկտիվի կարծիքը հաշվի առնելը երեխայի մեջ նրբազգացություն է ձևավորում սոցիալական երևույթների նկատմամբ, առաջ է բերում ինքնուրույնություն, խմբային պահանջներին հետևելու ընդունակություն, ապրումակցման կարողություն և այլն։ Այսպիսով, եթե խաղի բովանդակությունը երեխային թույլ է տալիս ծանոթանալ մեծերի գործունեության և փոխհարաբերությունների հետ, ապա առաջացող իրական փոխհարաբերությունները նրան սովորեցնում են ճիշտ վարք դրսևորել խաղի պրոցեսում առաջացող իրադրություններում։ Յուրաքանչյուր երեխա սովորում է իրեն պահել խաղային իրադրությանը, երեխաների տվյալ խմբի պահանջներին և իր սեփական անհատական առանձնահատկություններին համապատասխան։ Վարքագծի ընտրությունը կախված է երեխաների խմբի կազմից և սեփական հնարավորություններին տրվող գնահատականից։ Կան երեխաներ, որոնք սիրում են կարգադրություններ անել, իսկ ուրիշները գերադասում են ստվերում մնալ։ Երեխայի պասիվության աստիճանը միայն խաղում գրված տեղով չի որոշվում։ Նույնիսկ

երկրորդական դեր կատարելիս երեխան կարող է ավելի ակտիվ լինել և հուզական ավելի բարենպաստ հոգեվիճակում ինել, քան այն դեպքում, երբ նրան ուժով ստիպում են ավելի աչքի ընկնող դեր կատարել: Այս ամենը թույլ է տալիս ասել, որ խաղացող երեխաների խումբը սոցիալական հարաբերությունների յուրահատուկ դպրոց է, որտեղ մշտապես վարքի սոցիալական ձևեր են մոդելավորվում ու ամրապնդվում: Խաղալիս երեխաները ձեռք են բերում համագործակցելու մարդկային ունակություն: Խաղը շատ մեծ ազդեցություն է գործում խոսքի զարգացման վրա: Խաղային իրադրությունը յուրաքանչյուր երեխայից պահանջում է կոմունիկացիայի մեջ մտնելու ընդունակություն: Եթե երեխան ի վիճակի չէ խաղի ընթացքի վերաբերյալ իր ցանկությունները հստակորեն արտահայտելու, եթե չի հասկանում խաղընկերների հրահանգները, ապա նրա ներկայությունը բեռ է դարնում մյուս մասնակիցների համար: Այս պայմաններում արաջացող հուզական անբարեկեցիկ վիճակը խթանում է խոսքի զարգացումը: Խաղը լուրջ ազդեցություն է գործում նաև մտքի զարգացման վրա. խաղալիս երեխան սովորում է ընդհանրացնել առարկաներն ու գործողությունները, օգտագործել բառի ընդհանրացված նշանակությունը և այլն: Խաղային իրադրության մեջ ներգրավվելը պայման է հանդիսանում երեխայի մտավոր գործունեության տարբեր ձևերի զարգացման համար: Այն դեպքում, երբ երեխան առարկային տալիս է ոչ թե նրա իսկական անվանումը, այլ այն առարկայի անվանումը, որը պետք է տվյալ խաղային իրադրության մեջ, ապա երեխան կոնկրետ առարկայական մտածողությունից անցում է կատարում մտապատկերների միջոցով կատարվող մտածողությանը: Այսպիսով դերային խաղը մտքում գործողությյուններ կատարելու ընդունակություն է զարգացնում: Նախադպրոցական տարիքում խաղի բովանդակությունը որակական փոփոխություններ է կրում: Կրտսեր նախադպրոցականների խաղի հիմնական բովանդակությունն է կազմում խաղի մեջ ներգրավված առարկաների հետ այնպիսի գործողությունների կատարումը, որոնցում վերարտադրվում են իրական առարկաների հետ մեծահասակների կատարած գործողությունները: Օրինակ, 3 տարեկան երեխաները մաքրում են սեղանը, ավլում են հատակը, հաց են կտրատում, կոշիկներ են մաքրում և այլն:

Գործողությունների վերարտադրությունը կրտսեր նախադպրոցականի խաղի հիմնական բովանդակությունն է կազմում: Կարևոր է ընդգծել, որ այդ շրջանում

երեխաները, որպես կանոն, միայնակ են խաղում։ Նույնիսկ այն դեպքում, երբ նրանք նույն առարկայից են օգտվում կամ միավորվում են մեծերի ստիպմամբ, նրանց գործողությունը միմյանց կողքին, այլ ոչ թե միասին իրագործվող խաղ է։ Այդ պահին երեխաները միմյանց գործողությունների վրա համարյա թե ուշադրություն չեն դարձնում և նրանցից յուրաքանչյուրը զբաղվում է միայն իր առարկաներով։ Երեխայի ըմբռնման կատարելագործման հետ սերտորեն կապված տեղի է ունենում նաև նրա մտածողության զարգացումը։ Նախադպրոցական տարիքում կենսական խնդիրները երեխան կարող է լուծել երեք եղանակներով՝

1) ակնառուգործնական,

2) ակնառուպատկերավոր,

3) հասկացությունների միջոցով կատարվող տրամաբանական դատողություններով։

Որքան ավելի կրտսեր է երեխան, այնքան ավելի հաճախակի է նա դիմում գործնական փորձերի։ Տարիքի հետ զուգընթաց երեխաները ավելի ու ավելի մեծ չափով են օգտվում լուծման ակնառուպատկերավոր և տրամաբանական եղանակներից։ Նախադպրոցականի մտածողության զարգացման հիմքում ընկած է մտավոր գործողությունների ձևավորման պրոցեսը, ընդ որում որպես նախադրյալներ ծառայում են նյութական առարկաների հետ կատարվող գործողությունները։ Մտածողության զարգացման բարձրագույն մակարդակներում (երբ այն տրամաբանական ձևեր են ընդունում) մտավոր գործողությունները իրագործվում են ներքին խոսքի միջոցով, մտածելիս օգտագործվում են նշանների տարբեր համակարգեր։ Բայց նախադպրոցականի մտածողության պրոցեսում առավել օգտագործվում են ոչ թե նշաններ, այլ պատկերներ։ Սրանք որոշ դեպքերում կոնկրետ առարկաների արտացոլումներն են, իսկ երբեմն էլ ունենում են քիչ թե շատ ընդհանրացված և սխեմատիկ բնույթ։ Ընդ որում խնդրի լուծումը երեխան պատկերացնում է որպես առարկաների և սրանց փոխարինողների հետ կատարվող մի շարք ծավալուն գործողություններ։ Չնայած այն բանին, որ երեխայի պատկերավոր մտածողությունը որոշ դեպքերում հանգեցնում է սխալների, այն իրենից ներկայացնում է շրջապատող աշխարհի իմացության հզոր զենք և երեխայի համար իրերի ու երևույթների մասին ընդհանրացված պատկերացումների ստեղծման հնարավորություն է ապահովում։ Այս հանգամանքը ամբողջ ուժով ի հայտ է գալիս նախադպրոցական ուսուցման պրոցեսում։

Մտածողության զարգացման գործում վճռական դեր է խաղում ուսուցումը: Վերջին տարիներին կատարած հետազոտությունները ցույց են տալիս, որ նախադրոցական տարիքի երեխաների շատ առանձնահատկություններ, որոնք առաջ այդ տարիքի անկապտելի նշաններ էին համարվում, իրականում բացատրվում են երեխաների կյանքի ու գործունեության հատուկ պայմաններով և կարող են փոփոխվել նախադպրոցական ուսուցման բովանդակության և մեթոդների փոփոխման միջոցով: Օրինակ, երեխայի մտածողության կոնկրետությունը, տվյալ դեպքին նրա կապվածությունը անհետանում և իրենց տեղը զիջում են դատողության ընդհանրացված ձևերին, երբ երեխային ծանոթացնում են ոչ թե առանձին իրերի և դրանց հատկությունների, այլ իրականության երևույթների ընդհանուր կապերի ու օրինաչափությունների հետ: Նախադպրոցական տարիքում հասկացությունների և տրամաբանական գործողությունների ձևավորման հնարավորությունը չի նշանակում, որ երեխաների մտավոր դաստիարակության հիմնական խնդիրը հենց այդ պետք է լինի: Գլխավորը մտածողության ակնառու պատկերավոր ձևերի ըստ հնարավորի բարձր զարգացումն է, որովհետև հենց այդ ձևերի նկատմամբ է նախադպրոցական տարիքը առավել զգայուն և այդ ձևերը հսկայական նշանակություն ունեն հետագա ողջ կյանքի համար, քանի որ ստեղծագործական ակտիվության ցանկացած տեսակի անբաժանելի մասն են հանդիսանում: Նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարծես երեխան միաժամանակ ապրում է երկու աշխարհներում. իրական աշխարհում և իր երևակայության աշխարհում: Այս հանգամանքը դրսորվում է խաղերում, նկարներում, այն հեքիաթներում, որ հնարում է երեխան և այլն: Այդպիսի առաջին տպավորությունը հանգեցրեց այն բանին, որ հետազոտողներից ոմանք սկսեցին երևակայությունը համարել նախադպրոցականի համար բնորոշ գործունեության ձևերի աղբյուրը: Սակայն ավելի մանրակրկիտ հետազոտությունները ցույց տվեցին, որ երևակայության զարգացումը գործունեության խաղային, նկարչական և այլ տեսակներին տիրապետեու ոչ թե պատճառը, այլ հետևանքն է: Երևակայության նախնական տեսակները խիստ աղքատիկ են և ծագում են միայն գործունեության կատարման ընթացում: Նախադպրոցական տարիքի ողջ ընթացքում երևակայությունը միայն աստիճանաբար է հարաբերական անկախություն ձերք բերում: Երեխայի երևակայության պատկերները պայծառ են, ակնառու և հուզականությամբ հագեցված, բայց անբավարար չափով են

մատչելի հսկողության ու կառավարման համար։ Երևակայության զարգացման հիմնական ուղղությունը գիտակցական մտադրություններին աստիճանաբար ենթարկվելը և որոշակի մտահաղացումների իրականացման միջոց դառնալն է։ Դպրոց ընդունվելուց հետո երեխայի կյանքում սկսվում է բոլորովին նոր փուլ։ Այդ փուլի համար նա պետք է բավարար չափով նախապատրաստված լինի։ Ամենից առաջ երեխան պետք է պատրաստ լինի կատարելու այնպիսի լուրջ գործողություն, որը նրան ոչ միայն նոր իրավունքներ է տալիս, այլև բավականին դժվարի նպահաջներ է առաջադրում։ Փոքրիկ դպրոցականը իրավունք ունի ակնկալելու շրջապատողների հարգանքը իր ուսումնական պարապմունքների նկատմամբ և ինքն էլ պարտավոր է սիստեմատիկորեն կատարել ուսուցչի բոլոր առաջադրանքները, իր վարքը համապատասխանեցնել դպրոցական կանոնների հետ անկախ այն բանից, տվյալ պահին իր համար հաճելի է այդ, թե ոչ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յոթ տարեկանում երեխաների մեծ մասը ձգտում է աշակերտ դառնալ, բայց ոչ բոլոր դեպքերում են նրանք բավականաչափ հստակորեն պատկերացնում, թե ինչ է իրենից ներկայացնում սոցիալական այդ դիրքը։ Երբեմն նրանց գրավում է գործի միայն արտաքին կողմը. նրանք ցանկանում են պայուսակ ունենանալ, մեծ համարվել, գնահատականներ ստանալ և այլն։ Այսպիսով՝

- Դպրոցականի դիրքի համար իսկապես պատրաստ կարելի է համարել այն երեխային, որին դպրոցը գրավում է ոչ թե իր արտաքին հանգամանքներով, այլ նոր գիտելիքներ ստանալու հնարավորությամբ։ Այդպիսի երեխաները բավականաչափ զարգացած իմացական հետաքրքրություն ունեն։ Միայն դրանց հիման վրա երեխաները կարող են բավարար պատասխանատվությամբ վերաբերվել իրենց աշակերտական պարտականությունների նկատմամբ։
- Բայց միայն դպրոցական դառնալու ցանկությունն ու ուսման նկատմամբ լուրջ վերաբերմունքը դեռևս բավական չեն. պետք է կարողանալ նաև այդ ցանկությանն ու վերաբերմունքին ենթարկել իրադրական մղումները, ստիպել իրեն ուշադիր

լինել դասի ժամանակ, երբեմն ձանձրալի թվացող կանոններ սովորել, համառորեն խորհրդածել դժվարին խնդիրների լուծումներ գտնելու ուղղությամբ:

Այլ կերպ ասած,

- ապագա աշակերտը պետք է կարողանա կանխամտածված ձևով կառավարել իր վարքը, մասնավորապես իր իմացական գործունեությունը, այն նպատակամղել դեպի ուսումնական խնդիրների լուծումը: Իսկ այդ հնարավոր է դառնում, եթե երեխան ունի դրդապատճառների կազմվորված հիերարխիա, որը նրան թույլ է տալիս երկրորդական մղումները ենթարկել ավելի նշանակալից ու կայուն նպատակներին ու մտադրություններին:

Կատարելով եզրահանգում, ուզում եմ ասել, որ .

- անկախ այն բանից, թե ինչպիսին կլինի ուսուցիչը, ուսուցման համակարգը կամ ծնողը, առաջնահերթ է աշակերտի ուսանելու ցանկությունը :

Այսպիսով, դաստիարակության և կրթության կազմակերպման նկատմամբ կյանքի բարձր պահանջները ստիպում են մեզ փնտրել նոր, առավել արդյունավետ հոգեբանական և մանկավարժական մոտեցումներ՝ ուղղված ուսուցման մեթոդները կյանքի պահանջներին համապատասխանեցնելուն: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունի նախադպրոցական տարիքի երեխաների՝ դպրոցում սովորելու պատրաստակամության խնդիրը: Նախադպրոցական հաստատություններում և ընտանիքում կրթության և դաստիարակության կազմակերպման նպատակների և սկզբունքների որոշումը կապված է դրա լուծման հետ: Միևնույն ժամանակ, դպրոցում երեխաների հետագա կրթության հաջողությունը կախված է դրա որոշումից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.blog.armparents.com/2020/02/18/ինչպես-երեխային-պատրաստել-դպրոց-հաճա/

2. Ա. Վ. Պետրովսկի «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»

3.Ջ. Գյուլամիրյան վեց տարեկանների ուսուցման առանձնահատկությունները առաջին դասարանում:

4. Ա. Բյուրքչյան, ՏերԳրիգորյան Լ. «Այբբենարանի» մեթոդական ուղեցույց

5. iverh.com/yerexayi-patrastvatcuthyuneh-dprocin/